ԽՂՃԻ ՁԱՅՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՑՎԱԶՅԱՆ

XX դ. արվեստը որոնում էր մարդու և մարդկության զարգացման ուղիներ, պաշտպանում մարդասիրական իդեալները, մարդուն դիտում իբրև բարձրագույն արժեք: Համաշխարհային արվեստին ու գրականությանը համընթաց քայլող հայ գրականության նշանավոր դեմքերը դարասկզբին նույնպես ազդարարում էին չարին ու չարագործությանը դիմադրելու և դրանց դեմ պայքարելու կարևորությունը՝ սրբագործելով մարդկայնության ու սիրո իսկական պաշտամունքը: Հայ գրականությունն իր մեջ ներառեց երազը, հեքիաթը, տխրությունն ու հուշը՝ ամենուրեք իշխող չարության ապականված ոգին մերժելու և առուծախի առարկա դարձող հավատն ու խիղճը պաշտպանելու համար: Բարությունն ու խիղճը մարդկային հոգու բարձրակետն են, որ իրենց արմատներով գնում են դեպի ընտանիք ու մանկություն և զարգանում ու խորանում են դաստիարակության շնորհիվ: Դրանք դրսևորում են զգացմունքների, մտքերի, արարքների ներդաշնակություն այն ժամանակ, երբ արյամբ ժառանգածը հետագա տարիներին պարարտ հող գտնելով՝ անցնում էր անհրաժեշտ զգացական դպրոց:

Մեր ժողովրդի (ինչպես և մեր գրականության) առանձնահատուկ դրսևորումներից մեկը եղել ու մնում է բարության և խղճի առկայությունը, մի կարևոր հատկանիշ, որ տեսնում ենք դեռևս մեր գրականության ակունքներում: Այդ գիծը կարելի է համարել մեր գրականության ողնաշարը:

Դարասկզբի հայ գրականության մեծերի առաջին շարքում էր Հովհ. Թումանյանը: Նա մշտապես ընդգծում էր, որ առանց բարության ու խղճի, առանց բարոյական բարձր ինտելեկտի, մարդկային հասարակությունը կվերածվի ոչ բանական արարածների, խառնամբոխ էակների: Այդ շրջանի դրական համաստեղությունը չի կարելի պատկերացնել նաև առանց Դ. Վարուժանի, որի ստեղծագործությունը գեղարվեստական ու իմաստասիրական առումով հոդեհարազատ է Թումանյանի պոեզիային: Երկու նշանավոր մտածողներին էլ մեծապես զբաղեցնում էր հայ ժողովրդի գոյության և ապագայի խնդիրը, քանզի նոր դարաշրջանն իր հետ բերում էր նաև բարքերի անկում, մարդկային հարաբերությունների աղարտում, գթության ու խղճմտանքի ոտնահարում: Երկու բանաստեղծներն էլ խիստ դժդոհ էին իրենց ապրած ժամանակից և հաճախ, նորին հակադրելու համար, դիմում էին անցյալի օրինակներին: Նրանց համար պաշտելի էին գեղեցիկն ու վեհը, մաքուրն ու անբիծը, անդավաճան ու իդեալական սերը: Բավական է հիշել «Անուշ» և «Հարճը» պոեմները. առաջինում պատկերված է դեռևս չապականված նահապետական գյուղաշխարհը, երկրոր-

դում՝ նախաքրիստոնեական ժամանակները՝ հեթանոսության շրջանը, ուժի և գեղեցկության պաշտամունքը:

Հայտնի է, որ մեր գրականությունը, սկզբնավորման օրից իսկ, մշտապես հետամուտ է եղել խղճի գատին: Այդ ամենի հիմքում ընկած էին հասարակության ստորին խավերի՝ ընկճվածների ու տառապածների հանդեպ ունեցած ցավն ու գութը:

Աղքատության ու թշվառության պատկերումը գեղարվեստական խտացված դույներ է ստացել Թումանյանի և Վարուժանի պոետական աշխարհում: «Խրճիթում» բանաստեղծության մեջ Թումանյանն ընդհանրացնում է հասարակության մի ողջ շերտի ողբերգությունը: Համարյա նույն երևույթն ենք տեսնում (այլ իրավիճակում) նաև Վարուժանի «Սպասում» քերթվածում: Երկու պոետների ելակետը նույնն է՝ հումանիստական վերաբերմունք հասարակ մարդու, աշխատավորի հանդեպ: Նրանց հաստատ համոզմամբ՝ կարեկցանքը, մարդկային ամենավսեմ զգացումն է, աշխարհաշեն հատկանիշ, քանզի մարդը որքան խորն է զգում ու հասկանում իր ապրած կյանքը, նույնքան խորությամբ կզգա նաև ուրիշի ցավը: Այլոց ցավը տեսնելու և զգալու անզուգական աչք ու սիրտ ունեին նրանք, որ դարձան համակ կարեկից ոգի, տեսան մարդու հոգեկան դրաման, ժողովրդի ու հայրենիքի հալածական վիճակը և ձգտեցին օգտակար լինել նրանց: «Մենք,— գրում էր Թումանյանը,— շատ ենք քարացել չկամության ու չարակամության մեջ, շատ ենք ընտելացել ատելության մաղձի դառնությանը...մի՞թե խորթ ու անմատչելի պիտի մնա մեզ սիրո պայծառ զգացմունքը, մի՞թե չենք կարող իրար մոտենալ, բարության աչքերով նայել իրար... ու էսպեսով էլ կյանքը դարձնել քաղցր ու սիրելի»[1]: Բանաստեղծն այս մտորումներն արտահայտել է նաև չափածո խոսքով.

Ինչքա՜ն ցավ եմ տեսել ես,
Ենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել.—
Վատը՝ լավ եմ տեսել ես[2]:

Վարուժանի պոեզիայի հիմնական գաղափարը հանգում է կյանքի տառապանքից ծնված վշտի պատկերմանը և այդ վիշտն ամոքելու, դարմանելու անկեղծ ցանկությանը: Սկսած «Սարսուռներ» ժողովածուից՝ նրա գործերը պարունակում են համազգային ու համամարդկային գաղափարներ, որ ծնվել են ուրիշների ցավի հանդեպ իր հոգու խորքում առաջացած գթասրտությունից և դեպի անօթևաններն ունեցած սիրուց: Սա է, որ կոչվում է մարդասիրություն կամ «գութ հանուն ընկածների»:

Կյանքի թշվառությունը, սոցիալական ու քաղաքական չարիքը երիտասարդ հոգում ծնում էին միտքն ու հոգին տանջող սարսուռներ, և նա ցանկանում էր գոնե երգով օգնել թշվառներին: Բանաստեղծը կարծում էր, թե երգով հնարավոր է ազդել չար հոգիների վրա, ազնվացնել նրանց ու

---

[1] Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ). հ. 4, Երևան, 1969, էջ 161:

[2] Հովհ. Թումանյան. ԵԺ. հ. 2, Երևան, 1969, էջ 261:

բարի դարձնել: Նա հավատում էր, որ աստվածային գութը մարդու մեջ կարող է ծիլեր արձակել ու նրան հեռու պահել չարագործությունից: Վարուժանի սիրտը ցավում է և՛ ձյան վրայով մի կերպ սողացող, քուրջեր հագած աղքատ հաշմանդամի, և՛ մի կտոր հացի համար իրենց սերը վաճառող ու հոգիները ծախող խարված կույսերի համար, և նա, չկարողանալով օգնել, արտասվում է՝ տեսնելով մարդկային համատարած խեղճությունը.

Ո՛հ, չը տեսա ծով մ՛ անալի, երկինք մ՛ առանց սև ամպերու,
Մրրիկներե կաղնի մ՛ հեռու, և ծովեզերք մ՛ առանց բալի:
Այսպես՝ չը գտա ժրպիտ մը՝ ուր չը խառնվին արցունք լալյուն[3]:

«Տղա՛ք, ներեցեք» բանաստեղծության մեջ Վարուժանը խնդրում է ներել տկար, ցավագար եղբորը, եթե նա ինչ-որ վատ բան է կատարել, կարողանալ սիրել, թողնել ոխակալությունն ու անարգանքը, որպեսզի՝

Եվ գեռ մատաղ՝ թող չըկարդա ձեր դեմքին
Մարգկությունն իր ճիրաններով միասին[4]:

Թումանյանի երազանքն էր մարդուն տեսնել մաքրագործված, անարատ, իսկ հասարակությանը՝ բարի ու խղճմտանքով լի: Այս մտահոգությունները նոր չէին. դրանք գալիս են մեր գրականության վճիտ ակունքներից, ժողովրդի ազնիվ մտածելակերպից, հասնում Նարեկացի ու շարունակվում հետագա գրողների կողմից: Եթե մահացու հիվանդ 20-ամյա Մեծարենցը ձգտում էր դեպի բարին ու օգտակարը («Տու՛ր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական»)[5], իսկ Վարուժանը «Հացին երգը» ստեղծեց որպես գեղեցկության ու խղճի ահաղանգ, որպես աշխատանքի ու արարման հոգեզմայլ երգ («Ակոսներուն մեջ անոնք խինդ կը ցանեն, և Աստված Իրենց ճակտին ակոսեն Բարություններ կը հնձե...»)[6], ապա Թումանյանի երազանքն էր բարության ու գթության սերմեր ցանել, խիղճ ու խղճմտանք սերմանել մարդկանց հոգիներում: Դեռևս ստեղծագործական կյանքի վաղ շրջանում երիտասարդ բանաստեղծը խոր հակասություն էր տեսնում «ճոխ ու հրաշալի» բնաշխարհի և մարդկային հասարակության միջև.

Ես նայում եմ, և մի միտք
Հղանում է ինձանում.
Ինչու՞ համար են մարդիկ
Իրար զրկում, սպանում[7]:

---

[3] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ). հ. 1, Երևան, 1986, էջ 304:

[4] Նույն տեղում, էջ 28:

[5] Մ. Մ ե ծ ա ր ե ն ց. Երկեր. Երևան, 1986, էջ 126:

[6] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 2, Երևան, 1986, էջ 163:

[7] Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ). հ. 1, Երևան, 1988, էջ 39:

Թումանյանի համար « հոգու տանջանք» է, որ թշվառը օթևան չունի, իսկ մեծատունը, խնջույքից հոգնած, անգամ չի հիշում նրան: Բանաստեղծի սիրտը լիքն է «լուռ վշտերով», նրա հոգին տանջում են ժողովրդի միալար հեծեծանքն ու սրտատանջ մորմոքը, որոնք իր աչքերից արցունք են քամում: Այդ է պատճառը, որ նա իրեն համարում է մշտապես «խնդացող տխուր, սրտարեկ ուրախ», քանզի երբ ցանկացել է «անհոգ ծիծաղել», անմիջապես սրտի խորքից հառաչանք է լսել, իր հեգ ժողովրդի ցավն ու կսկիծը հանգիստ չեն թողել նրան: Ասվածի լավագույն օրինակներից է «Նախերգանքը»: Բանաստեղծի հոգու անչափելի վիշտն ու տառապանքը, սրտի խորունկ վերքերը համեմատելի են միայն հայրենի եզերքի անդնդախոր և լայնահուն ձորերի հետ: «Գուլթանի երգը», «Հին օրհնություն», «Դժար տարի», «Խրճիթում» և այլ գործերում լսվում է բանաստեղծի հոգու ցավն ունեզրկված աշխատավորի դժբախտ վիճակի հանդեպ: Թումանյանը դատապարտում է բոլոր չարամիտներին, ովքեր մոլի կրքերի ստրուկն են ու շվայտ կյանքի գերին, ովքեր զոհում են անմեղներին և կեղծավոր արտասուք թափում, ովքեր իրենց սեղանի հացը շաղախում են խեղճերի արյուն-արցունքով: Այդպիսիների համար չկա ոչ մի պատիժ, որովհետև Հիսուսի ճշմարիտ խոսքն անգամ արծաթով է վաճառվել: Բանաստեղծը ցանկանում է մարդու սրտում Աստծուն տեսնել, որպեսզի այնտեղից ցոլա խիղճն ու բարությունը: Նա Աստծուն խնդրում է մարդ էակին ազատել տանջանքից, պաշտպանել անմեղներին, պատժել չարին ու չարագործին, թույլ չտալ, որ «մարդը ժպտերես» մարդուն գիշատի: Աստված կարծես լսում է թշվառների ձայնը և իր զորության հզոր ուժով գալիս է օգնության.

Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,
Նորա թիկունքին դալիս եմ ձեր դեմ[8]:

Արևմտահայության սոցիալական ու քաղաքական անմխիթար վիճակը հանգիստ չէր տալիս Դ. Վարուժանին: Նրան «հալածում էին» որբերն ու սովյալները, տնանկներն ու տարագիրները: Աղքատության մեջ տառապող մարդկանց դրությունը սարսռեցնում էր երիտասարդ բանաստեղծին, և նա գթության ու կարեկցանքի խոսքն ուղղում էր աշխարհի անարդարության և անխղճության դեմ: Դեռևս 1905 թ. նա գրում էր.

Աղվո՛ր աղջիկ, ուրիշների արցունքին
Գիտե՞ս, թե ո՛րչափ աշխարհս է անտարբեր[9]:

Վարուժանը երգում էր լքվածների ցավը, ափսոսում, որ աղքատությունը մարդուն ախտավոր է դարձնում, դարձնում հուսաբեկ ու անզոր.

Կուրծքեր վերքով և արյունով պատարուն,
Հազիվ ծընած փոշի դարձած երազներ,

[8] Նույն տեղում, էջ 195:
[9] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. Հ. 1, էջ 160:

Եվ արցունքներ հևքով մ՝ ինկած քուրջերու.
Նրվաղումներ, կոծեր, գողեր, օրհասնե՛ր...[10]

Թումանյանի նման Վարուժանն էլ ժողովրդի սոցիալական վիճակի բարելավումը տեսնում էր աստվածային գթության մեջ: Խաչը պիտի օգնի, որ «մեղքերու փոթորիկներ չոռնան հար», մեղմացնի խավարը, որ կուրության պատճառն է, վերացնի մարդկության մահվան կսկիծը, հաստատի հանգիստ ու խաղաղություն: «Գողգոթայի ծաղիկներ»-ում Վարուժանը նկարագրում է արյունոտ ծաղիկների նման տառապանքից թոշնած իրականությունը, կյանքի հարվածներից ըղկտված մարդկանց: Առօրյա ծանր հոգսերի տակ կքած, թշվառության շեմին կանգնած մարդիկ բյուրավոր կողմերից մաշում են բանաստեղծի սիրտը:

Վարուժանի քնարական հերոսը դիմում է խաչված ու տառապած Հիսուսին՝ գթություն աղերսելով, քանզի խոցված ու արյունլվա է նաև իր մարմինը, պայտերով են դաղել իր ձեռքի ափերը, իսկ «մատներից արյուն են կթեր»: Այդ հերոսն իր մեջ կրում է ոչ միայն հարազատ ժողովրդի, այլև մարդկության տառապանքը.

Ո՛վ խաչված Հիսուս,
Դուն, որ նիզակված սիրտ մը ունեցար՝
Գրթա՛ սրրտիս հույզ.
Օր մ՝ որ անոր մեջ բաբախեց աշխարհ՝
Հույսին տեղ այսօր Ոչի՛նչը կ՝ապրի[11]*:*

Անօթևան մնացած բազմանդամ ընտանիքին օգնելու և թշվառության կողքով անտարբեր անցնող մարդկանց դատապարտելու այլ ելք չգտնելով՝ Վարուժանի քնարական հերոսը թույն է խմում, որպեսզի հաջորդ օրը անոթի մարդը գնա գերեզմանոց և շիրմի միջից, որպես հաց՝ «Քերթողի սիրտս այդ մախաղիդ մեջ ձըդեմ...»:

Թումանյանի և Վարուժանի ապրած ժամանակաշրջանը համարյա նույնն էր՝ XX դ. սկիզբը: Բնական է, որ նրանք իրենց վրա կրում էին դարի ու ժամանակի կնիքը և միևնույն երևույթներին յուրովի արձագանքում: Այդ առումով հետաքրքիր է երկու հեղինակների «Տրտունջ» - «Տրտունջք» խորագրով բանաստեղծությունների համեմատությունը: Թեև դրանք գրված են տարբեր առիթներով ու տարբերվում են նաև ծավալով, սակայն արտահայտում են անձնական ու հասարակական կենսական հարցեր: Երկուսի համար էլ գլխավորն այն հեղհեղուկ, ծանր մթնոլորտն էր, որ նրանց առջև դնում էր մարդու և ժողովրդի գոյության հրատապ խնդիրը: Թումանյանի մտահոգությունների գլխավոր առարկան մարդն էր իր հոգեկան դրամայով: «Մարդկային կյանքում մարդն է ամեն բան, և ամեն գործ ու գործունեություն բխում է նրանից»,— գրում էր Թումանյանը, իսկ Վարուժանը. «Ա՛հ, որքան կուզեի մարդ էակին գիրքը դրել»:

---

[10] *Նույն տեղում, էջ 40:*
[11] *Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 2, էջ 87:*

Թումանյանի պոեզիայում հատկապես ընդգծվում են ողբերգականն ու դրամատիկականը, «սոցիալական աղետներից և մարդու ճակատագրից ծնված տագնապները»[12]: Դրանց մասին են նաև բանաստեղծի հետևյալ մտորումները. «Այսպես, չգիտենք ընչի հավատանք, ինչ սիրենք, ինչ ցանկանանք-տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ալեկոծության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները»[13]:

Ե՛վ Թումանյանի, և՛ Վարուժանի քնարական հերոսները դարի մտավորականներն են՝ իրենց բոլոր հակասություններով, հոգու «լուռ մխանքով», «աննվաճ» մնացած վշտով և հուսահատությամբ: Մարած հույսերի տխուր ճանապարհով քայլում է Թումանյանի հերոսը հայրենի աշխարհում, ուր ամենքը և ամեն ինչ օտար են նրա սրտին, որովհետև մարդկային վիշտը չհասկանալն ու անտարբերությունը քարացնում են մարդու հոգին, կյանքը դարձնում «ահավոր գեհեն».

Ընչի՞ն մարդուկներ, լըրբորեն հանգիստ,
Անսիրտ, փոքրոգի, դրծծի ու կոպիտ.
Մեռնում են, մարում նըրանց հայացքից
Ե՛վ հոգու ձրգտում, և՛ սըրտի ժըպիտ[14]:

Թումանյանը ցավում էր, որ XX դ. մարդու մեջ կորչում է մարդկայինը, վերանում են փոխադարձ սիրո անկաշառ զգացումը, նվիրվածությունը, լիարժեք կյանքով ապրելու հնարավորությունը: Նա գտնում էր, որ հասարակության ամենամեծ և անկասելի ուժը մարդկային խիղճն է, իսկ ուր մեռնում, վերանում է այն, սկսվում է այդ հասարակության աստիճանական անկումը: Պատահական չէ, որ Թումանյանի չափածո և արձակ գործերի գլխավոր հարցադրումներից մեկը հենց գթասրտության ու խղճի գաղափարն է:

Վարուժանը նույնպես խիստ դժգոհ էր XX դ. սկզբի կյանքից, նորամուտ դարը համարում էր «Նեռի աշխարհացունց մռտ՛յլ Ոգի...», քանզի ժողովուրդը շարունակում էր մռնչալ դարավոր վերքի ցավից.

Արևելքեն Արևմուտք, և Հյուսիսեն մինչ Հարավ
Քաղցր կ'ոռնա շան մը պես, Քաղցն Հիսուսի պես կու լա...
...Հավերժության ծոցին մեջ Սափոր մ՛ ես, լի՛ արյունով,
Ե՛վ ըղեղով, և՛ կամքով, և՛ զոհերու հավատքով[15]:

Վարուժանը «Տրտունջքում» պատկերում է հոգեկան մի այնպիսի դրամա, որով ճանաչելի են դառնում ժամանակի կյանքի հակասություններն

---

[12] Հ ր. Թ ա մ ր ա զ յ ա ն. Բանաստեղծության հազարամյա խորհուրդը. Երևան, 1986, էջ 162:
[13] Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Եժ. հ. 4, էջ 362:
[14] Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ. հ. 1, էջ 197:
[15] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ, հ. 2, էջ 212, 214:

ու երկփեղկվածությունը: Այստեղ ևս հակասության մեջ են երազն ու իրականությունը, հույսն ու հուսալքությունը: Անձնական ապրումների միջոցով Վարուժանը «կենդանացնում է մի ամբողջ դարաշրջան իր ամենահիմնական գծերով: «Տրտունջքը» երկպառակտված հոգու արտահայտություն է»[16]:

Եթե Թումանյանն իր սրտի դառնությունն արտահայտում է աշխարհի ու մարդկանց օտարացման և «չնչին մարդուկների» դեմ, ապա Վարուժանը նույնն անում է թախիծի ու տառապանքի ընկերոջ՝ Եղիա Տեմիրճիպաշյանի հետ մտերմիկ զրույցի միջոցով: Երկու բանաստեղծներն էլ դրասկզբի դառնակսկիծ իրականությունից դժգոհ՝ ապրում են ծանր դրամա, իրենց վշտով «անդունդներ են չափում», զայրանում իրականության անկատարության պատճառով: Վարուժանը գրում է.

Բայց տառապանքն անպատում շիրմաքարի մը պես սև
Փակած էր սիրտս ընդդեմ գարնանային ավիշին.
Ու մայիսի վարդերեն ճակատիս շուրջ լոկ մընաց
Փըշյա պըսակ մը խըրված մինչ և ըղեղս արյունլվա[17]:

Թումանյանի և Վարուժանի ստեղծագործություններում մշտապես լսվում են ժողովրդի ցավի ու վշտի տրոփները, տառապանքից դուրս գալու որոնումները, ժամանակի կնճռոտ հարցերին պատասխանելու ձգտումը: Վարուժանի հալածական հոգին արտասվում է խավարի մեջ, քնարական հերոսի մարմինը պատած է փշե պսակով, և բանաստեղծը անձնական վշտի մտորումներից անցնում է մրոտ խրճիթներում պատսպարված գյուղացիների և հանքեր պեղող բանվորների՝ «բախտին խորթ զավակների դաժան կյանքի պատկերմանը, իսկ կյանքի մոլոր ճանապարհներին «ունայն տրտունջով» քայլող բանաստեղծի՝ Հ. Թումանյանի սրտից այլևս դուրս չեն դալիս հոգեզմայլ երգեր, որովհետև.

Օտար են շուրջըդ ու չեն հասկանում
Ոմանք քո վիշաը, ոմանք քո լեզուն,
Անտարբեր գալիք երջանիկ օրին,
Զրգիտեն նըրա կարոտը անքուն...[18]

Դեռևս 1989-ին երիտասարդ Թումանյանը գրում էր «մարդ-հրեշների» անսիրտ ու տմարդի գործերի մասին, դատափետում էր դիմակավորներին ու մահացու ախտով վարակվածներին, որոնք «անարատության վերարկու հագած՝ հալածում են հազարավոր անմեղ հոգիներին: Բանաստեղծը ժողովրդին պայքարի կոչ է անում.

Հառա՜ջ, կռվելով, և կըգա մի օր,
Որ կընկնի ներկան վատչվեր, դաժան,

---

[16] Պ. Ս և ա կ. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1978, էջ 350:
[17] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 2, էջ 91–92:
[18] Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ. հ. 1, էջ 197:

Նրա ավերի վերա փառավոր
Ապագան լուսո կրկանդնի նշան[19]*:*

Նմանությունն զգալի է Թումանյանի «Պոետին» և Վարուժանի «Ես ինձի» բանաստեղծությունների միջև: Երկուսում էլ խոսքն ուղղված է պոետներին, նրանց կոչմանն ու սրբազան առաքելությանը:

Թումանյանը պոետի իսկական կոչումը համարում է անձնական վիշտը թաքցնելը և ժողովրդին հավատ ներշնչելը, ընկածին սիրտ տալը, կենդանի երգով վհատած զգացմունքները արթնացնելը և փրկության ուղին ցույց տալը: Թումանյանը պոետի շուրթերով դատավճիռ է կարդում անբարո ժամանակներին ու մարդկանց, դատապարտում է «անսիրտ հոգիներին», որոնք ծառայում են միայն «ոսկի հորթին»: Բանաստեղծը կոչ է անում.

Եվ պատվանդանը հիմքից խորտակիր
Ոսկի հորթերի, ինքնամոլության.
Մարդոց սրտերում դարձյալ հաստատիր
Լրբությամբ մերժած գահն աստվածության[20]*:*

Վարուժանը նույնպես խոսում է պոետի անունից և խնդրում է Աստծուն, որ ապագայի լույսը, ուրախության ու բարության արշալույսը պարգևի իրեն, որպեսզի կարողանա ամոքել իր չորս կողմը տարածված ողբահեծ աղաղակողների վիշտը: Նա դատաստանի սյունին է գամում գիշատող «անգղ-մարդուն», որի անասնական բնազդը ոչնչացնում է ամեն սրբություն: Բանաստեղծի սիրտը հյուծվում է որբերի ու տնանկների կսկծից, արցունք է կաթում հոգու վրա, իսկ դեպի երկինք ուղղված կիսամեռ հոգիների արցունքի կաթիլներն ու հեծեծանքները դառնում են «անձնապարար մարդկության» ճակատին նետված նախատինք: Վարուժանը ձգտում է գթության ու եղբայրության սիրաշող բողբոջներ հանել անխիղճների դեմ և միշտ պայքարել.

Կուզեմ կրռվիլ ընդդեմ կյանքի հարձակման
Եվ վերք առնել չարին դիմաց, բախտին տակ:
Անշըշուկ կյանք մ՛ ինձ համար է գերեզման.
Անմըտածում գըլուխ մըն ալ չորցած գանկ[21]*:*

Մեկ այլ բանաստեղծության մեջ («Խաբված կույսեր») Վարուժանը, Թումանյանի նման դատապարտելով բուրժուական իրականության տմարդի օրենքները, ուր սերը վաճառքի է հանվում, «գութից ու բարկությունից» տանջվելով գրում է.

Եվ ես քենո՛վ կանիծեմ գարուս կավատ Մարդկության
Ոսկի Հորթերը բոլոր[22]*:*

---

[19] *Նույն տեղում, էջ 36:*
[20] *Նույն տեղում, էջ 55:*
[21] *Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ, հ. 1, էջ 317–318:*
[22] *Նույն տեղում. հ. 2, էջ 122:*

Թումանյանն ու Վարուժանը հաճախ են դիմում Աստծուն՝ խնդրելով պատժել չարին և երկրի վրա հաստատել խաղաղություն և արդարություն: Բնորոշ օրինակներից են Թումանյանի «Կանչ» և Վարուժանի «Մոխիրներուն առջև», «Ձյունե դադաղը» քերթվածները: Թումանյանը դժգոհում էր, որ՝

Ինչու՞ տակավին չես պատժում չարին,
Ու՞ յժդ է պակասում, թե՞ չենք աղերսում.
...Թե՞ դու չըգիտես, որ այստեղ, երկրում
Մարդը ժպտերես մարդ է գիշատում...[23]

Իսկ Վարուժանը և՛ դժգոհում է, և՛ աղերսում:

Ո՜հ, ո՜վ Տեր իմ, Տեր անայլայլ, անվըրդով,
Է՞ր կը փըշրես ալրիքն՝ եկող ալիքով.
Է՞ր կը հանձնես տերևը՝ գուժ մըրըրկին,
Լերան ավազն՝ հեղեղներուն մոլեգին.
Է՞ր կը մատնես մարդը՝ մարդուն կեղեքման
Եվ հեգ ճակատը՝ ոտքերու հաղթական[24]:

Կամ՝ ... գեթ անձնըվեր գութ չը արվիր մարդերուն՝

...Որ մարդկային սըրտերու մեջ՝ գեթ անոնք
Խորշ մը գրտնան ջերմագին[25]:

Թումանյանն ու Վարուժանը ցավով են անդրադարձել նաև պանդխտության թեմային և բանաստեղծության նյութ դարձրել ժողովրդի օրհասական վիճակը: Զէ՞ որ պանդխտությունը եղել ու մնում է մեր ժողովրդի մշտամորմոք վիշտը, չսպիացող վերքը, նրա սրտի ու մտքի տվայտանքը: Դարեր ի վեր հայը ստիպված է եղել հեռանալ հարազատ վայրերից և հայրենիքի կարոտը սրտում՝ կռունկներից «խաբրիկ» ուզել ու անդարմանելի հոգով օտար հողի բաժին դառնալ:

Դեռ պատանեկության տարիներին Թումանյանը ոտանավորներ է նվիրել իր հալածական ժողովրդին («Աչքերն արցունք, ինքը լուռ»)՝ նորանոր տողեր ավելացնելով այս «զուտ հայկական» թեմայով գրված երգերին: Խոսքը նաև 1882 թ. գրած «Օրորք» բանաստեղծության մասին է: Զոհված անմեղներն ու ավերված հայկական դյուղերը անրուժելի վերք են բացել բանաստեղծի սրտում և իոր հետք թողել նրա քնարերգության վրա («Մութ ու խավար իմ հայրենիք», «Հարություն», «Գիշեր», «Օտարության մեջ», «Պանդուխտն երգեց», «Գաղթականի երգը» և այլն): Հայրենիքից հեռացած և օտար երկրներում դեգերող պանդուխտներին Թումանյանն անվանում է «խորտակված մարդիկ», որովհետև նրանք այդ սառն

[23] Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ. հ. 1, էջ 86:
[24] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 1, էջ 21, 30:
[25] Նույն տեղում:

ու անգութ աշխարհում «կկորչեն ինչպես կաթիլը ջրի», կձուլվեն կամ կանհետանան առանց հուշ ու հիշատակի:

Որոշակի ընդհանրություն է նկատվում Թումանյանի «Պանդուխտ երգեց օտար երկրում» և Վարուժանի «Հիվանդ է» քերթվածների միջև: Երկուսում էլ պատկերված է օտար երկրում իրենց սև օրերն անցկացրած և ծանր աշխատանքից ուժասպառ եղած երիտասարդների օրհասական վիճակը: «Հոգով տխուր և մարմնով տկար» երիտասարդները օտարության մեջ մեռնում են մենակ հեռու հայրենական օջախից, փայփայած երազներից ու սիրո վայելչությունից: Թումանյանը գրում է.

Մեռավ պանդուխտն, բարյավ մնաք...
Գիտեք, որքան ձեզնից թաքուն
Խեղճը հեծեց, ողբաց մենակ...
Գեթ ողորմի տվեք հոգուն[26]:

Վարուժանը «Գերեզմանատան մեջ» փոքրիկ ակնարկում գրում էր, որ իր սիրտը վերջին արցունքն էր քամում պանդուխտ հայրենակիցների դժբախտ ճակատագրի պատճառով: Այդ արցունքը պանդուխտների կարոտակեզ ծնողների, այրիացած ամուսինների, որբ զավակների աղի արցունքն է, որ այնպես ողբագին արձագանքում էր բանաստեղծի ցաված սրտի խորքերում: Վարուժանը իր բողոքի ձայնն է ուղղում Աստծուն.

Տե՛ր, ի՞նչ սըրտով կը կոտրես
Թևն որուն վրա կը կըռթընին մանուկներ
Եվ ծընողքներ ձյունագես[27]:

Ինչպես 1894–1896 թթ. կոտորածների, այնպես էլ Մեծ եղեռնի և ընդհանրապես հայ ժողովրդի անցյալ ու ներկա վիճակի, նրա գոյատևման խնդիրներն իրենց ծավալով ու բովանդակությամբ կարևոր տեղ են գրավում թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ գրողների ստեղծագործություններում: Մարդկային խղճի պրոբլեմն առանձնապես հրատապ հարցադրման նյութ դարձավ Եղեռնի տարիներին. Սիամանթոն դատապարտում էր գոյություն չունեցող արդարությունը, իսկ Թումանյանը խոսում էր միայն ջարդի ու կոտորածի սովոր թուրքական բնազդի մասին: «Ամենայն հայոց բանաստեղծին» ողջ կյանքի ընթացքում հանգիստ չթողեց իր ժողովրդի սոցիալ-քաղաքական անմխիթար վիճակը: Սկսած 1890-ական թվականներից նա հաճախ էր անդրադառնում արևմտահայության օրհասական կյանքին և ֆիզիկական գոյության խնդրին («Մեհրի», «Հին կռիվը», «Երկու սև ամպ», «Տրտմության սաղմոսներից», «Հոգեհանգիստ» և այլն): Կյանքի «դաժան բանտում» բանաստեղծը չի կարող երջանիկ լինել, որովհետև հայրենիքը հոշոտվեց իր աչքի առաջ, խորտակվեցին փրկության ոսկի երազները, որի պատճառով՝

[26] Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 1, էջ 48:
[27] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 1, էջ 52–53:

Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սրրտից և՛ երգ, և՛ աստված[28]:

Դեռևս 1910-ական թվականների համրնդհանուր ուրախության մեջ Թումանյանը կանխազգում էր գալիք մեծ աղետը՝ նշելով, որ «նորից կոտորածի մռայլ մղձավանջը ծանրանում է մեր հոգնած ուսերին»: Այդ նույն ժամանակներին է վերաբերում նրա մարգարեական խոսքը, թե թուրքը «ոչ միայն ինքը չստեղծագործեց ու ոչ մի հանճարեղ բան չտվեց աշխարհքին, այլև գրսից չընդունեց ոչինչ և՛ չմշակեց: Միշտ մնաց սուրը ձեռքին ավերող»: Թումանյանի կարծիքով «թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացողություններ»[29]:

«Տրտմության սաղմոսներից» շարքը հայ ժողովրդի անլուր տառապանքի նկարագրությունն է, հոշոտված հայրենիքի տխուր վիճակի գեղարվեստական վերարտադրությունը: Աշխարհը լցվել էր հայ ժողովրդի աղաղակներով, իսկ Աստված դա քիչ համարեց և նոր արհավիրքներով պատեց երկիրը: Երիտասարդ բանաստեղծը դիմում է «անգութ աստծուն»՝ յուրատեսակ վեճ բացելով նրա հետ.

Մի՞թե, աստվա՛ծ, դեռ բավական չըտեսար
Էսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,
Մի՞թե, աստվա՛ծ, հաճելի չեն քեզ համար
Աղոթք ու սեր, կյանք ու տաղեր զըվարթուն[30]:

Խավարի մեջ լսվող տանջահար ժողովրդի ցավի ձայնը հանգիստ չէր տալիս նաև Վարուժանին, որի վրձինը թաթախված էր հայրենի հողի «որդան կարմիրի» ու «ծովածուփ արյան մեջ», և որի արվեստը «հեղինակին սրտեն փրթած փերթ մըն է, թարմ, արյունով ու կյանքով դեռ բաբախուն»: Գենտում սովորելիս Վարուժանը լսում է Ադանայի կոտորածների մասին և ցավով արձագանքում. «Կիլիկիայի ջարդը ճմլեց աղիքներս: Ցեղին հոդին արյուն կուլա մեջս, հրդեհված քաղաքներեն եկող ամեն լուր՝ տաք մոխիրի պես կթափվի գլուխիս և սրտիս վրա»[31]: *Աստիճանաբար կուտակվում էր նյութը, ձևավորում նրա ըմբոստ ոգին, որ հետո պիտի պոռթկար որպես բանաստեղծություն ու պոեմ, որպես բողոք ու ցասում ընդդեմ իր ժողովրդի դահիճների:*

«Հայհոյանք» բանաստեղծության մեջ Վարուժանը պատկերում է 80-ամյա ծեր կնոջ, որը փախած տնից ու տեղից, պատմում է իրենց հասած ծանր հարվածների մասին. հրդեհվել են գյուղերը, մարել են օջախները, ամենուր արյուն է ու ավեր: Կինը մեր ժողովրդի խորհրդանիշն է, որը ձեռքերը երկինք կարկառած՝ հաշիվ է պահանջում Աստծուց՝ նրան անվանելով «երկնածին վիշապ».

---

[28] Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 1, 1988, էջ 205:
[29] Հովհ. Թումանյան. ԵԺ, հ. 4, էջ 275–276:
[30] Նույն տեղում, հ. 2, էջ 151:
[31] Դ. Վարուժան. Նամականի. Երևան, 1965, էջ 174:

Եվ մայրությունս ու հայությունս՝ որոնց հար
Սրտիս մեջ թույն ջամբեցիր,
Իբրև երկու խայթ խըզճի
Կայծակնահյուս կողերուդ մեջ կմըխեմ[32]*:*

Առանձին գործերում ողբալով հեթանոս աստվածների մահը՝ Վարուժանը ընդվզում է քրիստոնեության խեղճության, մարդկային կյանքի բռնադատության, կյանքը հավիտենական տառապանք ընկալելու դեմ և պայքարի կոչ անում:

Խոսելով հայոց ցեղասպանությունը պոեզիայի նյութ դարձնելու մասին, Ավ. Իսահակյանը գրում էր. «Հայկական աղետը անկարելի է գեղարվեստի սովորական ձևերով ու դույներով արտահայտել. անկարելի է, անհնար է, անհանդուրժելի է նրան ամփոփել հանդերի ու վանկերի մեջ, չափավոր տողերի մեջ: Գեղարվեստի ո՛չ մի դպրոց՝ ռոմանտիզմ, իմպրեսիոնիզմ, ռեալիզմ... նրան չի կարող հարմարվել. նա դուրս է բոլոր օրենքներից ու ձևերից...»[33]*: Գուցե այդ է պատճառներից մեկը, որ հաճախակի կրկնվող ջարդերը պայմանավորեցին մահվան տեսիլների ծնունդը: Մահվան, չարչարանքի ահավոր պատկերները մտան պոեզիա՝ աշխարհին ցույց տալու անարդար իրականությունը, խեղաթյուրված կյանքը: Տեսիլքներում հակադրվում են ստեղծագործ ժողովուրդն ու բարբարոս ոգին:*

Մահվան համատարած թագավորությունն է պատկերված Թումանյանի «Հոգեհանդիստ», «Դժոխքի հանդեպ», Վարուժանի «Ջարդը», «Կիլիկյան մոխիրներուն», «Անիի ավերակներուն մեջ» և այլ քերթվածներում: Ինչպես Թումանյանը, այնպես էլ Վարուժանը ցույց են տալիս, որ «Մարդակեր գազան մարդը» աներևակայելի չարագործություններ է կատարում, որ դեռ հեռու է մարդ դառնալու ճանապարհը: «Հոգեհանդիստ» բանաստեղծության մեջ Թումանյանը հայրենի բնաշխարհի, վեհատեսիլ լեռների ու փրփրադեզ գետերի, ավերված բնակավայրերի համապատկերում ստեղծում է խորհրդանշական տեսարաններ: Վառելով հայոց հոգու հսկա կերոնները, հայրենի հին օրենքով վերջին հանգիստն է կարդում «ազգի անբախտ զոհերին».

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանչեցի թըշվառ էն հոգիներին՝ ցըրված հավիտյան
Մինչև Միջադետք, մինչև Ասորք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
–Հանգե՛ք, իմ որբե՛ր ... իզու՛ր են հուզմունք, իզու՛ր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...[34]*:*

Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանն այդ բանաստեղծությունը համարել է «մի վսեմ ռեքվիեմ», «տառապալից սրտի խորքից ծնված մի սաղմոսերգ, որը

---

[32] Դ. Վարուժան. ԵԼԺ. հ. 1, էջ 143:
[33] Ա. Ինճիկյան. Մտերիմներ և մտորումներ. Երևան, 1967, էջ 307:
[34] Հով. Թումանյան. ԵԼԺ. հ. 1, էջ 279:

գնալով ահագնանում է, ահեղ և ողբալից ողողանջներով լցնում ամբողջ հայկական աշխարհը»[35]:

Այդ նույն սարսափը մենք զգում ենք նաև Վարուժանի մի շարք քերթվածներում: «Ջարդը» բանաստեղծության մեջ նա ներկայացնում է համատարած կոտորածները հայոց լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում: Որտեղով անցել էր Թուրքի բարբարոս ոգին, այնտեղ հրդեհվել էին գյուղերն ու քաղաքները, հող ու մոխիր էին դարձել մարդկային կյանքերը, «մորթվել էին արշալույսները»: Բանաստեղծի արցունքոտ աչքերը ամենուր մահ ու մոխիր են տեսնում. ճանապարհի վրա՝ դիակներ, «աղբյուրներուն քով զոհեր, ակոսներուն մեջ զոհեր».

Արյան ծովու մ՛ ալիքներեն կը ծփան
Մարդու ահեղ դիակներ,
Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
Դիակը մեր Ազգին և մեր Աստըծույն...[36]:

Նույն ահասարսուռ տեսարաններն են գծագրվում նաև «Կիլիկյան մոխիրներուն» բանաստեղծության մեջ.

Սեպ ժայռին դեմ խաչեր են յոթը այրեր մերկանդամ.
Արյունն իրենց մազերեն,
...Արյունն իրենց ձեռքերեն և ոտքերեն բևեռված
Հողին վրրա կը վազե վիմուտներն այն ներկելով.
...Մանուկներու ողջակեզ սըրտեր հոն խունկ կը մըխան...[37]

Եթե Թումանյանը պատկերում է ահավոր սպանդի հետևանքներն ու տառապում իր ազգին հասած ծանրագույն հարվածի պատճառով, ապա Վարուժանը բոլոր մանրամասներով նկարագրում է Եղեռնի սարսափները, ստեղծում կոտորածի ահավոր պատկերներ՝ ավելի կոնկրետացնելով վայրագությունների համընդհանուր միջավայրը: Վարուժանը շարունակում է Թումանյանի հայրենասիրական պոեզիայի ավանդները և ներկայացնում իր ապրած դաժան իրականությունը ոչ թե լռելու և համակերպվելու համար, այլ հնչեցնելու ըմբոստացման ու հերոսության ղողանջները, պայթեցնելու «վաղվան հրաբուխը»:

Ինչպես նկատվել է, որոշ նմանություն է զգացվում «Հոգեհանգիստ» և «Կիլիկյան մոխիրներուն» բանաստեղծությունների միջև:

Եղեռնի նկարագրության ընդհանուր համապատկերում երևում են սգավոր բանաստեղծների ցավատանջ ու խոժոռ հայացքներ, որ իրենց սրտի անհուս ցավն ու կսկիծն են արտահայտում և բողոքի ձայնը բարձրացնում անբռնակալելի բիրտ ու կոպիտ ուժի դեմ: Նրանք տառապագին երգով հոգեհանգիստ են կարդում բյուրավոր նահատակների հիշատակին կամ տեր կանգնում անթաղ շիրիմներին: Վարուժանը դրում է.

---

[35] Է դ. Ջ ր բ ա շ յ ա ն. Զորս գագաթ. Երևան, 1982, էջ 41:
[36] Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 1, էջ 137:
[37] Նույն տեղում, էջ 148–149:

Մեռելներն հարկ է թաղեմ, և ողջակեզն օծանեմ:
...Պետք է փորեմ այս գիշեր գերեզմաններ անհամար,
Եվ լուսեղեն պատանքներ հենում մինչև առավոտ...[38]

Հայոց դարավոր ցավն ու վիշտը նկարագրելիս անգամ, երկու բանաստեղծներն էլ, խավարի միջից նայում են դեպի աստվածային լույսը, հույսով սպասում գալիք երջանիկ օրերին:

Թումանյանի ստեղծագործության մեջ խիստ կարևորվում է լույսի անչափելի դերը կյանքի և մարդու հոգևոր աշխարհի ձևավորման գործում: «Փարվանա» լեգենդում անշեջ կրակի սիմվոլիկ պատկերը մարմնավորում է ոչ միայն հավերժական, անբասիր ու անդավաճան սերը, այլև մարդկային կերպարի անբիծ կատարելությունն ու լուսավոր իդեալները: Ձգտումը դեպի լույսը, բարին ու ազնիվը Թումանյանի մշտական երազանքն էր: Թիթեռնիկի և անշեջ կրակի պատկերները միաձուլվում են ու դառնում մարդու հավերժական երազանքի խորհրդանիշ: Որքան էլ կյանքը դառն ու դաժան լինի, չի կարող մարդու սրտից հանել հումանիզմի, արդարության և կատարյալի ձգտման ցանկությունը:

Եթե գիշերը («Գիշեր») ցավատանջ հոգու աղաղակ է բերում, և գիշերային լռության մեջ լսվում են անվերջ աղաչանք ու լաց (իսկ մեր ժողովրդի կյանքը եղավ գիշերվա նման մութ ու դաժան), ապա «Արուսյակ» բանաստեղծության մեջ պատկերում է, որ պայծառ աստղը անապակ շողեր հագած գիցուհի է, որը ոչ միայն լուսավորում է ու կյանք տալիս, այլև չարին ու չարիքներին զարկող առասպելական հերոս է, որ հալածում է մութը խավար հոգիներից և բացում է «լույս ցերեկի դուռը»: Չէ՞ որ գիշերային խավարի մեջ են կատարվում բոլոր տեսակի չարագործություններն ու դիվային արարքները :

Վարուժանի համար լույսը նույնպես կյանք է, բնության և մարդու էության չապականված անկյունը, մաքուրն ու անարատը: Լույսով են ողողված մայրական հոգին, հերոսի գերեզմանը, մանկության հարազատ վայրերը: «Գողգոթայի ծաղիկներ» շարքում ցավի ու տառապանքի մեջ երևում է լույսը, որի զորությանը հավատում է քերթողն ու երկրպագում.

Կերթամ աղբյու՛րը լույսին...
... Լույսն աղվոր է, բարձրության մեջ հոսանուտ,
Խոնարհումի մեջ արդար[39]*:*

Բանաստեղծը սրտի դատարկ սափորը լցնում է լույսի աղբյուրից, որը երջանկություն պիտի պարգևի մարդկանց. դա այն նշխարքն է, որ ամեն առավոտ իջնում է մարդկանց սեղաններին: Վարուժանի համոզմամբ «Լույսը արյունն է բնության, գիշերվան թագն ու պատմուճանն է օրվան», արվեստի ստեղծիչն է: Լույսի ծոցի մեջ են ծնվում հանճարները: Լույսը բարություն ու խիղճ է նաև, և բանաստեղծը հյուղակներին լույս է տանում, որպեսզի խավարի մեջ գտնվողները լուսավորվեն հոգով ու

---

[38] *Նույն տեղում, էջ 151:*
[39] *Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 2, էջ 88:*

մտքով: Վարուժանը նաև այսպես է արժևորում լույսի էությունը. «...քեզի կը դառնամ քեզ տեսնելու, և քու կենդանարար և տիրական ջահդ մեջս կ՚արծարծի: ... ո՛վ երկնային լույս, մանավանդ իմ նե՛րս ծագե, թող քու ճառագայթներդ ոգվույս ամեն զորություններուն մեջ թափանցեն. աչքը հաստատե հոգվու՛յս մեջ, անկե վերցուր փարատե մշուշը, որպեսզի մահկանացու աներևույթները տեսնվին աչքիս, և ես պիտի խոսիմ»[40]:

Թումանյանի և Վարուժանի պոեզիայի որոշակի ընդհանրությունը չի սահմանափակվում միայն թեմատիկայով. այն տեսանելի է նաև դեպի ժողովրդական ստեղծագործության ակունքները գնալու և այնտեղից հոգևոր սնունդ քաղելու հարցում: Եթե Թումանյանն իր ստեղծագործական կյանքի առաջին շրջանից լայնորեն օգտագործեց ժողովրդական բանահյուսության ընձեռած հնարավորությունները, ապա Վարուժանը հատկապես «Հացին երգը» ստեղծելիս պոետական մտածողությունը զուգորդեց ժողովրդական բանարվեստի կենարար ոգուն, ձգտեց դասական պարզության և ընթերցողին պարգևեց աշխատանքի ու ստեղծման տարերքը փառաբանող հոյակապ գործեր: Վարուժանը ծրագրել էր գրել նաև «Հայոց հոմերագիրքը», «Գինիի երգը», մշակել հայկական էպոսը, որոնց միջոցով ավելի էր մոտենալու ժողովրդական պարզ ու անպաճույճ մտածողությանը, ինչին հասել էր Թումանյանն իր էպիկական լայնաշունչ պոեզիայով:

ГОЛОС СОВЕСТИ В ПОЭЗИИ ТУМАНЯНА И ВАРУЖАНА

ОВАНЕС АЙВАЗЯН

Р е з ю м е

С момента своего зарождения армянская литература с последовательным постоянством обращалась к "суду совести", поэтому одним из ее характерных проявлений была и остается проблема отражения добра и совести. Еще более острый характер она получила в XX в., что было связано с поиском гуманистических идеалов и противостоянием злу и злодеяниям, с необходимостью бороться с ними. В плеяде армянских писателей XX в. свое неоценимое место занимают Ов. Туманян и Д. Варужан, которых всегда волновал вопрос существования и будущего нашего народа, потому что новая эпоха принесла с собой падение нравов, искажение человеческих отношений, попрание основ милосердия и совестливости. По твердому убеждению Туманяна и Варужана, сострадание и сопереживание бедам других являются самыми благородными человеческими чувствами, которые они глубоко отразили в своих произведениях. Они увидели душевную драму человека, гонимое состояние народа и родины и взбунтовались против несправедливой действительности. На сравнительном анализе ряда стихотворений показана деятельность бездушных "людей-чудовищ", тяжелое положение скитальцев, осуждаются злодеяния геноцида. Общность поэзии Туманяна и Варужана не ограничивается только тематикой: она

[40] *Դ. Վ ա ր ո ւ ժ ա ն. ԵԼԺ. հ. 3, 1986, էջ 224–225:*

заметна также и в их обращении к истокам народного творчества, откуда они черпали духовную пищу.

VOICE OF CONSCIENCE IN TOUMANYAN'S AND VAROUZHAN'S POETRY

HOVHANNES AYVAZYAN

S u m m a r y

From the very beginning of its origin Armenian literature applied to the "court of conscience" with consecutive constancy. That is why one of its features was and still remains the problem of expressing kindness and conscience. In the 20th century it got even a sharper character, in close connection with the search of human ideals and the harm and crime opposition, with the necessity of struggle against them. In the pleiad of Armenian writers of the 20th century H. Toumanian and D. Varouzhan had their invaluable place. They always worried about the present and the future of our people for the new epoch brought moral degradation, perversion of human relations, violation of conscientiousness. Toumanyan and Varouzhan were duple convinced that compassion for others' troubles was the most noble human feeling. This feeling was reflected in their works. They saw the drama of hard conditions of their people, their motherland. So they revolted against unfair reality. By comparative analysis of some poems they show "monsters"' cruel activities as well as roamers' hard state and denounce the crimes of the genocide. Toumanian's and Varouzhan's poetry have much in common. They both apply to the people's creative origin to get some spiritual nourishment.